ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԵՊՀ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ՆՎԻՐՎՈՒՄ Է Ա. ԵՍԱՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 100-ԱՄՅԱԿԻՆ

Երևան
ԵՊՀ հրատարակչություն
2015

ՀՏԴ 340:06
ԳՄԴ 67
Ե 540

Հրատարակության է երաշխավորել
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի խորհուրդը

Գլխավոր խմբագիր՝
իրավ. գիտ. դոկտոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
պրոֆեսոր Գ.Ս. Ղազինյան

Խմբագրակազմ՝
իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ա.Հ. Գաբուզյան
իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ս.Ա. Դիլբանդյան
իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ա.Գ. Վաղարշյան
իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Գ.Բ. Դանիելյան
իրավ. գիտ. դոկտոր, դոցենտ Վ.Դ. Ավետիսյան
իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ Ս.Գ. Մեղրյան
իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ Վ.Վ. Քոչարյան

Ե 540 ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու/ ԵՊՀ; Գլխ. խմբ.՝ Գ.Ս. Ղազինյան.– Եր.: ԵՊՀ, 2015.–208 էջ:

Ժողովածուն ամփոփում է ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետում 2014թ. դեկտեմբերի 11-ին տեղի ունեցած գիտաժողովի նյութերը՝ նվիրված ականավոր իրավաբան Աղասի Եսայանի ծննդյան 100-ամյակին:

Այն ընդգրկում է իրավունքի գրեթե բոլոր ճյուղերի վերաբերյալ գիտական աշխատանքներ, որոնք աչքի են ընկնում բարձրացված հարցերի արդիանակությամբ, տեսական խորը վերլուծություններով և գործնական նշանակությամբ: Ժողովածուի մեջ տեղ են գտել ինչպես ճանաչված գիտնականների, այնպես էլ երիտասարդ դասախոսների ու ասպիրանտների աշխատանքները: Կարող է օգտակար լինել իրավաբան տեսաբանների, իրավաստեղծ և իրավակիրառ մարմինների ներկայացուցիչներին, իրավունքի տարբեր հարցերով հետաքրքրվողներին:

ՀՏԴ 340:06
ԳՄԴ 67

ISBN 978-5-8084-1933-9

© ԵՊՀ հրատ., 2015
© Հեղ. խումբ, 2015

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Վիգեն Քոչարյան
"PERINCEK V. SWITZERLAND"ԳՈՐԾՈՎ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17 ՎՃՌԻ ԽՆԴՐԱՀԱՐՈՒՅՑ ԿՈՂՄԵՐԸ 5

Լևոն Գևորգյան
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՏՅԱՆՆԵՐԻ ՉԱՐԱՇԱՀՈՒՄԸ ԵՎ ՉԻՐԱԳՈՎՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՈՐԾԸ 18

Անի Սիմոնյան
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ 25

Արթուր Վաղարշյան
ՊԵՏԱԻՐԱՎԱԿԱՆ ՌԵԺԻՄԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ 35

Տարոն Սիմոնյան
ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԵՎ ԱՆԿԱՅՈՒՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՈՐՈՇԱԿԻԱՑՄԱՆ ՀԱՄԱԼԻՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԴՐԱՆՈՒՄ ՆԿԱՏԵԼԻ ՈՐՈՇ ՕՐԻՆԱՉԱՓՈՒԹՅՈՒՆՆԵՐ 56

Ալվարդ Ալեքսանյան
ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՑՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐԸ 68

Նարինե Դավթյան
ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՄ ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԻ ՓՈՒԼԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԵՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՁԵՎԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ 87

Գևորգ Դանիելյան
ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԱՐՑԱԴՐՈՒՄՆԵՐԸ 98

Վարդան Այվազյան

ԿՈՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼԻԶՄԻ (ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ) ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ 124

Անահիտ Մանասյան
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԱՐԴԻ ԻՐԱՎԱՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ 140

Արա Գաբուզյան
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ՝ ՈՐՊԵՍ ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՂԲՅՈՒՐ 149

Սամվել Դիլբանդյան
ՆԱԽՆԱԿԱՆ ԴԱՏԱԼՍՈՒՄՆԵՐՆ ԸՍՏ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՆԱԽԱԳԾԻ 160

Аида Искоян
ФОРМИРОВАНИЕ И РАЗВИТИЕ ЭКОЛОГИЧЕСКОГО ПРАВА: МЕЖДУНАРОДНЫЕ И НАЦИОНАЛЬНЫЕ ПРЕДПОСЫЛКИ 174

Գրիգոր Բեքմեզյան
ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ ՈՉ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՎՆԱՍԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԻ ՇԱՐՔ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՋ 190

Բանալի բառեր՝ *վարչարարություն, վարչարարության սահմաններ, վարչական դատավարություն, վարչական կարգ, հանրային իշխանություն, հանրային իշխանության մարմիններ, հանրային նշանակության մարմիններ, հանրային ծառայություն իրականացնող մարմիններ, կորպորատիվ կառավարման մարմիններ:*

Ключевые слова: *администрирование, границы администрирования, административное судопроизводство, административный порядок, общественная власть, органы общественной власти, органы общественного значения, органы, осуществляющие общественную службу, органы корпоративного правления.*

Key words: *administration, administration limits, administrative litigation, administrative order, public authorities, public authority bodies, public bodies, public service bodies, corporate governance bodies.*

ԿՈՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼԻԶՄԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Վարդան Այվազյան
ԵՊՀ սահմանադրական իրավունքի ամբիոնի դոցենտ, իրավ. գիտ. թեկնածու

Գլոբալացման ձևաչափով ընթացող ինտեգրացիոն գործընթացների աննախադեպ արագացումը առաջացնում է մի իրավիճակ, որում աշխարհն ամբողջությամբ վերցրած փաստացի անցնում է գործառնավորման միանգամայն նոր մակարդակի՝ քաղաքական, տնտեսական, մշակութային, սոցիալական, միգրացիոն և այլն, և համապատասխանավար խնդիր է առաջանում պոստ ֆակտում վերակազմակերպել նոր համաշխարհային իրավակարգի կառավարման համակարգն ու իրավական ամրագրում տալ արդեն գործող աշխարհակարգի նոր դասավորվածությանը՝ խնդիր դնելով այն իրավական կարգավորման համարժեք տրամաբանությամբ տեղափոխել համաշխարհային իրավակարգի համակարգ: Այս պարագայում առանցքային է դառնում գլոբալացման այնպիսի հայացեկարգը, որը պետք է հստակ արտացոլի առաջ ընթացող տրանսնացիոնալիզմի ընթացիկ վիճակը, որն իր մեջ ներառում է ինտեգրացիոն գործընթացի բաղադրիչները և իրավունքի ծագումնաբանության հիմնարար գործոնները, որոնց առնչությամբ միջազգային իրավունքի և նրա ինստիտուտների արդյունավետությունն ու համարժեքությունը պետք է ենթարկվեն մանրակրկիտ ստուգման ու ճշտման: Դա այն էմպիրիկ համատեքստի անքակտելի մասն է, որում միջազգային իրավունքը, դեռևս գտնվելով դոկտրինալ հիմքի վրա, ստանում է իր հիմնական ազդակները: Այնքանով, որքանով պետությունը անտեսում կամ հարկադրաբար հրաժարվում է սեփական քաղաքացիների ընդհանուր շահերի երաշխավորի իր դերակատարությունից, այդ կորստի հատուցման համար պետք է ունիվերսալ կամ տարածաշրջանային մակարդակում ստեղծվեն ընդ-

հանուր ինստիտուտներ։ Այս պարագայում անհրաժեշտություն է առաջանում ոչ միայն վերակազմակերպել միջազգային իրավունքը, այլև արամատապես վերափոխել համաշխարհային հանրության իրավական կարգավորման ամբողջ պարադիգման՝ միջազգային իրավունքի հիմքի (սուբտրատ) և լեգիտիմության նոր վերաիմաստավորմամբ։

Անշուշտ, միջազգային իրավունքի ավանդական դերակատարությունը միջպետական հարաբերությունների կարգավորման համակարգում պետք է համալրվի սահմանադրական գործառնությունով, որը կսահմանի միջազգային իրավունքի այնպիսի նորմեր, որոնք կվերաբերեն միջազգային, միջպետական, ինչպես նաև ներպետական իրողություններին։ Հատուկ անհրաժեշտ է նկատել, որ միջազգային իրավունքի համակարգի զարգացման և կայացման հարցում կոնստիտուցիոնալիզմի ամրապնդումն ու ուժեղացումը այլընտրանք չունեն, և որ միայն դրա շրջանակներում կարելի է խուսափել իրավունքի համակարգում համակարգային հակամարտություններից և մեր ընթացիկ իրողությունում կանխել միջազգային իրավունքի համակարգում տիրող գլոբալ խրոնիկ ճգնաժամը։ Միջազգային իրավունքի ճգնաժամի իրավական ձևաբանության (մորֆոլոգիա) բացահայտումը համարվում է համաշխարհային հանրության մոլորակային համակարգի «իրավական հիվանդության» դիագնոստիկայի առաջնային պայմանը, որն իր մեջ ներառում է երկու հիմնարար, միմյանցով փոխպայմանավորված բաղադրիչներ։ Դրանք են.

1. Աշխարհակարգի կառավարման համակարգի ճգնաժամը՝ որպես իրավական կարգավորման օբյեկտ։

2. Գլոբալ իրավակարգի ճգնաժամը՝ որպես իրավական կարգավորման համակարգ։

Այս առնչությամբ որպես համաշխարհային հանրության քաղաքակրթական կարողությանն ուղղված մարտահրավեր, հայեցակարգային, ֆունկցիոնալ և օպերացիոն մակարդակներում համալիր ամբողջականությամբ առաջանում են հետևյալ կենտրոնական հարցադրումները.

- Ինչպիսի՞ն պետք է լինի աշխարհակարգի իրավական կարգավորման համակարգը
- Որո՞նք են աշխարհակարգի իրավական կարգավորման համակարգի կառուցման մեթոդաբանական և մեթոդական հիմքերը
- Գոյություն ունի՞ արդյոք և ո՞րն է աշխարահակարգի իրավական ծագումնաբանության համընդհանուր ճանաչված և մատչելի հայեցակարգային հիմքը
- Ո՞րն է աշխարհակարգի հավասարակշռված գործառնավորման օպերացիոն կանոնակարգը, իրավակիրառ մեխանիզմը
- Արդյոք միջազգային իրավունքի ընթացիկ համակարգը, որը գործառնավորվում է դոկտրինալ մակարդակով, համապատասխանո՞ւմ է և կարող է լուծել այդ խնդիրը։
- Ո՞րն է միջազգային իրավունքի ծագումնաբանության սիստեմատեխնիկան, կոնստիտուցիոնալիզմի դերը դրանում և կարո՞ղ է արդյոք այն սկզբունքորեն իրեն թույլ տալ չհենվելու կոնստիտուցիոնալիզմի վրա։
- Ինչպե՞ս ապահովել միջազգային իրավունքի՝ որպես համակարգի ամբողջականությունը իր կայացման բոլոր փուլերում՝ մեկից մյուսին ներդաշնակ անցումով. որո՞նք են վերոնշված փուլերը.

Զրոյական մակարդակում միջազգային իրավունքի սուբյեկտ պետք է լինի լիարժեք պետական կառույցը։ Ինքնիշխան պետության իրավունքներն են՝

Առաջին մակարդակում՝ միջազգային իրավունքը՝ որպես միջազգային գոյակցության իրավունք։

Երկրորդ մակարդակում՝ միջազգային իրավունքը՝ որպես համագործակցության իրավունք։

Երրորդ մակարդակում՝ միջազգային իրավունքը՝ որպես հա-

սարակության կյանքի կազմակերպման ունիվերսալ շաբլոն, որը ենթադրում է ինտեգրացիայի իրավունքը:

Չորրորդ մակարդակում՝ միջազգային իրավունքը՝ որպես միջազգային հանրության իրավունք, որը ենթադրում է միջազգային տրանսնացիոնալիզմը:

Ըստ էության միջազգային իրավունքի ճգնաժամի հիմքում ընկած են համակարգային հակամարտություններ, որոնք հանդես գալով որպես հակամարտաբանական ֆենոմենի դրսևորումներ, հանգեցնում են միջազգային իրավունքի գործառնավորման խաթարման ինչպես գլոբալ կառավարման, այնպես էլ իրավական կարգավորման համակարգում, որի ծագումնաբանության բնույթը պայմանավորված է հետևյալ հիմնական գործոններով.

- Աշխարհակարգի մոդելի ընտրության մշակման կտրվածքով գերարագ կառուցակարգի նախապատվությունը՝ իրավիճակային կառավարման ձևաչափում հապճեպ կարգով հարցերի լուծման առաջնահերթությամբ, որը միջազգային իրավունքի համակարգին էմպիրիկ նախադեպի սինթեզի միջոցով տալիս է ինքնաձևավորման ինդուլգենցիա:
- Համակարգային հիմքի վրա խարսխված՝ աշխարհակարգի ճարտարապետության հիմնարար մշակման (առաջին հերթին գլոբալիզացման՝ որպես նոր բազային ֆենոմենի ակադեմիական և կիրառական գիտական նախագծումը), պրոակտիվ կառուցակարգի բացակայությունը, որը կհամախմբեր բոլոր մտավոր, վարչական և նյութական ռեսուրսները, ինչպես նաև համաշխարհային հանրության բոլոր մասնակիցների կոլեկտիվ որոշումների ընդունման կառուցակարգերի մշակման բացակայությունը: Ակնհայտ է, որ միայն վերոնշյալ գործոնների բացառումը կարող է ապահովել իր էության նախապես որոշված բովանդակությամբ և ֆունկցիոնալ առաքելությամբ միջազգային իրավունքի համակարգի կառուցումը:
- Մշտական հեղափոխական իրավիճակի անախրոնիզմը (հին համակարգը ի վիճակի չէ, նորն էլ պատրաստ չէ): Տեխնիկական առաջընթացը համաշխարհային քաղաքակրթությունը իր դրսևորման դրվագային բազմազանությամբ փաստացի բերում է նոր որակական վիճակի, որին ինքը պատրաստ չէ:
- Պետական կառույցի կառուցման ունիվերսալ գործիքակազմի բացակայությունը ինչպես ազգային, այնպես էլ վերազգային մակարդակում, որը թույլ կտար ապահովել բոլոր տեսակի անցումների կառավարելիությունը ինչպես կառավարման համարժեք համակարգի, այնպես էլ համարժեք իրավական կարգավորման մակարդակում, որն ամբողջությամբ համակարգային հիմքով կանխորոշում է աշխարհակարգի լեգիտիմությունը (ոչ միայն ընթացիկ պահին) հետևողական և կառավարելի զարգացման ռեժիմում:
- Միջազգային իրավունքի համակարգի մշակման համակարգային հակամարտության առկայությունը, որը ծագում է իրավական կարգավորման նույն համակարգի ներսում տարբեր մոտեցումների հայեցակարգային անհամատեղելիության հետևանքով, որոնցում համաշխարհային հանրությունը, որպես միջազգային իրավունքի ամրագրման առարկա, կազմակերպական առումով դրսևորվում է տարբեր սեգմենտներով: Մասնավորապես համաշխարհային հանրությունը հանդես է գալիս՝

1. ի դեմս ՄԱԿ-ի անդամների
2. ի դեմս պետական կոնգլոմերացիաների անդամների, որոնք միութենական կամ ֆեդերատիվ մակարդակի միասնական իրավաբանական անձի շրջանակներում օժտված են իրավասուբյեկտությամբ (օրինակ՝ Եվրամիությունը)
3. ի դեմս պայմանագրային-կոալիցիոն կազմավորումների անդամների՝ առանց իրավասուբյեկտության ձևավորման (G8, G 20)
4. Բիլատերալ միջկառավարական պայմանագրերի կողմերի

Այս պարագայում տարբեր մոտեցումները փաստացի վերարտադրում են տարբեր միջազգային իրավունքներ, որոնք նախաձեռնում են համակարգային հակադրություններ՝ սկսած աննշան տարաձայնություններից մինչև մեկը մյուսի համակարգային փոխա-

դարձ բացառում, ինչն էլ հայացակարգային, գործառնական և օպերացիոն մակարդակներում հանգեցնում է «միջազգային իրավունքի պատերազմի»։

Ժամանակակից միջազգային իրավունքի՝ որպես գլոբալ իրավական հանրության կառուցողական բլոկի ընկալումը շարունակում է մնալ որպես բոլոր մակարդակների գիտական հարթակներում քննարկվող հայեցակարգային թեմա։ Մեր զեկույցում խնդիր է դրվում նկարագրել վերոնշյալ համակարգային հակամարտության՝ որպես աշխարհակարգի իրավական կարգավորման համակարգի ճգնաժամի բազային սկզբնապատճառի լուծման մոտեցումները միջազգային իրավունքի համակարգում կոնստիտուցիոնալիզմի սկզբունքների քննարկման միջոցով։

Մեթոդաբանական առումով միջազգային իրավունքի համակարգում կոնստիտուցիոնալիզմի սկզբունքների առանձնացման համար մեր կողմից մշակվել են հետևյալ կառուցվածքային ասպեկտները՝

- միջազգային իրավունքի գործառույթներն ու նորմատիվությունը։ Այս համատեքստում, ի թիվս միջազգային իրավունքի տարբեր գործառույթների, հատուկ կարևորվում է լեգիտիմացման, ինչպես նաև պետական-քաղաքական գործունեության կառավարման և սահմանափակման սահմանադրական գործառույթը։
- Համաշխարհային հանրության՝ արդեն որպես իրավունքի սուբյեկտի սահմանադրական կարգավիճակի ներդաշնակեցման մեխանիզմը ներպետական սահմանադրական իրավակարգի և ամբողջությամբ վերցրած սահմանադրաիրավական կարգավորման շրջանակներում՝ իրավական անկոնֆլիկտության և համակարգային ամբողջականության բոլոր հատկանիշների հաշվառմամբ, ինչպես նաև դրանից բխող՝ իր օրենսդրության մեջ իրավաբանական կոլիզիաների բացառմամբ։
- Միջազգային իրավունքի և ներպետական սահմանադրական իրավունքի փոխհարաբերությունը։ Պետության կարգավիճակի դիտարկումը՝ որպես համաշխարհային հանրության գործակալ կամ ներկայացուցիչ։
- Միջազգային հանրության կազմակերպման մեխանիզմը և միջազգային ֆեդերալիզմի սահմանադրականացման հիմնահարցի առանձնացումը, իրավական կարգավորման համակարգի այն մոդելը, որն ապահովում է ազգային և վերազգային մակարդակների հավասարակշռված փոխգործակցությունը, միջազգային ինստիտուտների՝ որպես միջազգային իրավունքնեի սուբյեկտների գործառնական կարգավիճակը, ինչպես նաև օպերացիոն և կանոնակարգված փոխգործակցության մեխանիզմը։

Կիրառական մակարդակում առանձնացրել ենք այն հիմնական տենդենցները, որոնք կանխորոշում են միջազգային իրավունքի մեթոդաբանությունն ու պրակտիկ ընկալումը.

1. Միջազգային իրավունք 1. Համաձայն առաջին հայեցակարգի՝ հիմնական վերազգային կոնգլոմերացիաները պետք է հետևեն այն գերտերության հունին, որի շահերը և համոզմունքները առավել մոտ են իրենց սեփականին։ Տվյալ հայեցակարգը ենթադրում է միջազգային իրավունքի միանգամայն իրատեսական ընկալում, մասնավորապես, միջազգային անվտանգության և խաղաղության ապահովման ասպարեզում։ Այն կարելի է անվանել հեգեմոնի միջազգային իրավունք՝ խարսխված համաշխարհային հանրության և գլոբալ կառավարման միաբևեռ մոդելի վրա։
2. Միջազգային իրավունք 2. Երկրորդ հայեցակարգը ելնում է վերազգային կոնգլոմերացիայի ստեղծման անհրաժեշտությունից (մասնավորապես՝ ԵՄ), որը կարող է հավասարվել այլ համաշխարհային գերտերություններին։ Սա, այսպես կոչված, բազմաբևեռ աշխարհի հայեցակարգն է։
3. Միջազգային իրավունք 3. Երրորդ հայեցակարգը գլոբալ իրավական համաշխարհային հանրության ձևավորման ուղղությամբ ընթանալն է, որը կսահմաներ ընդհանուր շրջանակներ և քաղաքական իշխանության իրականացումը կուղղորդեր համընդհա-

նուր մարդկային արժեքների և համընդհանուր բարօրության լույսի ներքո: Այս մոտեցումը ենթադրում է միջազգային իրավունքի վերակազմավորում, որի էությունը մեկ բառով կոչվում է «Կոնստիտուցիոնալիզմ»: Մակ-ի կողմնորոշում: Այն ենթադրում է համաշխարհային հանրության և միջազգային իրավունքի սահմանադրական մոդելը:

Եվրամիության կայացման օրինակով նշված երեք հայեցակարգերը սովորաբար ասոցացվում են համապատասխանաբար Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և Գերմանիայի հետ:

Ժամանակակից միջազգային իրավունքի՝ որպես գլոբալ իրավական հանրության կառուցողական բլոկի ընկալումը, որի հիման վրա կառուցվում է աշխարհակարգը, պահանջում է միասնական հայեցակարգի առկայություն, որը կընդունվի և կհաստատվի միջազգային հանրության բոլոր պետությունների կողմից: Հակառակ պարագայում անխուսափելի կդառնա պրեֆերենցիալ հատկանիշներով միջազգային իրավունքի դրվագայնացումը, որոնց չափանիշները սահմանվում են մասնակից-պետությունների կողմից կոալիցիոն համագործակցության շրջանակներում, և որը կհանգեցնի հաջորդական ռեցիդիվներով և բռնի ուժով կոալիցիոն իրավունքի ներդրմանը: **Հետևաբար միջազգային իրավունքի հիմնարար բովանդակային համալրումը պետք է լինի իրավունքի գերակայության սահմանադրական գործառույթի ապահովումը համաշխարհային հանրության դրսևորման բոլոր կտրվածքներով (արտաքին և ներքին), որը պետք է բացառի այն բազային իրավական կոլիզիան, որ «Իրավունքի գերակայությունը կարող է սահմանվել բռնի ուժով»:**

Մինչդեռ իրավունքի գերակայությունը՝ որպես գոյ, տրամաբանական առումով կարող է կենսունակ լինել միայն այն դեպքում, երբ իրավունքը հանդես է գալիս որպես լիարժեք գոյ (այսինքն՝ իրավունք է ունենում լինել որպես այդպիսին), որը համապատասխանաբար պետք է սահմանի իրավունքի ուժի սկզբունքի առավելությունը ուժի իրավունքի նկատմամբ՝ դրանով ձևավորելով իրավունքի գերակայության, որպես իրավական օբյեկտի սահմանադրական կարգավիճակը: Ակնհայտ է, որ վերոնշյալ երեք հայեցակարգերը իրավական բովանդակության առումով ենթադրում են միջազգային իրավունքի ծագումնաբանության տարբեր բազային հիմքեր, ըստ էության փոխադարձաբար բացառում են միմյանց և համապատասխանաբար ենթադրում են միջազգային իրավունքի իրավագոյացման տարբեր գենետիկա, մորֆոլգիա (ձևաբանություն) և մեխանիկա:

Այսպես օրինակ՝ միաբևեռ աշխարհակարգի միջազգային իրավունքը ենթադրում է հեգեմոնի աքսիոմատիկան, որը չի կարող լինել սահմանադրական բազիսի լիարժեք իրավական էկվիվալենտը, եթե նույնիսկ տեխնիկական մակարդակում էմուլյացվում է սահմանադրության ընդունումը:

Մորֆոլոգիական մակարդակում կառուցվում է մեկ կենտրոնից, առանց քննարկման և առանց այլընտրանքի համապարտադիր նորմերի ընդունման պարադիգման, որը հանգեցնում է ինքնուրույն օրենսդրական նորմաստեղծագործության ունակության աստիճանական անկման (դեգրադացիա):

Նորմի օպերացիոն գործողության իրավակիրառ մակարդակում պետք է ընդամենը իրականացնել գործողության կանոնակարգով ձևավորված գործողություններ, ինչը ունիվերսալության համարժեքը չէ, այլ փոխարինվում է համապարտադիր միատեսակությամբ: Իրավունքի տվյալ ծագումնաբանությունը հիմնովին տարբերվում է նրանով, որ այն արդեն ապրիորի կոնստիտուցիոնալիզմի կարիք չունի, այսինքն՝ կորչում է իրավական բովանդակությամբ օրենսդրության համալրման գործառույթի իմաստը հատկապես գերտերություն հանդիսացող հեգեմոնից հետո հանդես եկող պետականության երկրորդ էշելոնի համար:

Երկրորդ մոտեցման դեպքում միջազգային իրավունքի իրավագոյացման գենետիկան ենթադրում է միջպետական հարաբերությունների նորմագոյացման ամբողջ սպեկտրի իրավական հա-

մալրման ունիվերսալ մոդելի մշակման անհրաժեշտություն՝ աշխարհակարգի կառավարման համակարգի հիմնական կենտրոնների միջև կոնսենսուսի հիման վրա՝ իրավական կարգավորման համակարգի վերազգային հիմնարար սկզբունքների մշակման միջոցով, որոնք պետք է ունենան սահմանադրական օբյեկտների հատկանիշներ։ Մորֆոլոգիական մակարդակում (գործադիր մարմինը կարող է լինել, օրինակ ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը, իսկ օպերացիոն մակարդակում՝ երկնագույն սաղավարտները) մշակվում են սահմանադրության չգրված հատկանիշներ՝ այս կամ այն մակարդակի կոլեկտիվ մարմնի որոշումների անվիճելի կատարման ձևաչափով։ Միջազգային իրավունքի սահմանադրական գործառույթի դերում տվյալ դեպքում հանդես է գալիս աշխարհակարգի կառավարման համակարգի և դրա իրավական ամրագրման կոորդինացված և համաձայնեցված գործողությունների սկզբունքը։

Երրորդ հայեցակարգը ենթադրում է միջազգային իրավունքի սահմանադրական համակարգի ներդրման համալիր մոտեցում, որի հիմքում ընկած է այն սկզբունքը, որ առանց կոնստիտուցիոնալիզմի միջազգային իրավունքը չի կարող հանդես գալ որպես իրավական ամրագրման համապարտադիր պլատֆորմ, որն ըստ էության կներառի ինչպես ներքին, այնպես էլ արտաքին բոլոր գործընթացները, որոնք ընթանում են ամբողջ համաշխարհային հանրության խորը, գլոբալ ինտեգրացման պայմաններում։

Այս իմաստով կոնստիտուցիոնալիզմը հանդես է գալիս որպես միակ իրավական ինստիտուտ, որն ապահովում է սահմանադրական աստիճանակարգի ինկորպորացված համալիր սկզբունքների հիման վրա իրավունքի գերակայությունն իրացնող նորմատիվ փաստաթղթերի նկարագրումը, կառուցումը, կիրառումը։ Հետևաբար, միջազգային իրավունքի էության ոչ միանշանակ լինելու, ինչպես նաև ընթացիկ ժամանակահատվածում կիրառվող դոկտրինալ համակարգի (այն չի կարող հանդես գալ որպես մոլորակային հանրության իրավական համակարգն ապահովող հիմնարար բազիս)

հաշվառմամբ ակնհայտ է դառնում ունիվերսալ բազային հայեցակարգի անհրաժեշտությունը, որը կարողանա հանդես գալ որպես համաշխարհային հանրության համաձայնության (պայմանագրի) ելակետ, դառնալով իր տեսակի մեջ որպես յուրահատուկ սահմանադրական օբյեկտ, օրինակ՝ գլոբալ կառավարման համակարգի հիմնական օրենք։

Ներկա ժամանակահատվածում միջազգային իրավունքը հատուկ իրավական համակարգ է, որը բաղկացած է սկզբունքներից և նորմերից, որոնք կարգավորում են միջպետական հարաբերությունները՝ խաղաղության, անվտանգության և համագործակցության նպատակով։ Այս պարագայում միջազգային իրավունքը ազգային իրավունքի համեմատությամբ բնութագրվում է հատուկ նորմագոյացման գործընթացով։ Նման համակարգում չեն կարող լինել կենտրոնական, ազգային օրենսդրական մարմիններից բարձր կանգնած մարմիններ, իսկ նման շփումները կարգավորող նորմերը կարող են ստեղծվել միայն շփումների մասնակիցների, այսինքն՝ պետությունների կողմից։ Միջազգային իրավունքում բացակայում են գործադիր մարմինները։ Միջազգային շփումներում իրավունքի նորմերը կիրառվում են, և դրանց իրացումն ապահովվում է շփման մասնակից պետությունների կողմից։

Միջազգային հարաբերություններն իրենցից ներկայացնում են պետությունների միջև կապեր՝ տվյալ պահին գոյություն ունեցող նյութական, հոգևոր արժեքների փոխանակման առումով։

Միջազգային իրավունքը տարբերվում է ազգային իրավունքից նաև կարգավորման օբյեկտով, որպիսին նրա համար հանդիսանում են պետությունների, ինչպես նաև, միմյանցից անկախ ինքնիշխան միավորումների միջև հարաբերությունները։ Ազգային իրավունքը կարգավորում է հարաբերություններ, որոնք ծագում են այդ համակարգի սուբյեկտների միջև։ Քանի որ միջազգային շփումների սուբյեկտները համարվում են ինքնիշխան պետությունները, ապա միջազգային իրավունքի նորմերի խախտման առնչությամբ ծագած

վեճերը կարող են քննարկվել այս կամ այն միջազգային դատարանում միայն վեճի կողմ հանդիսացող պետությունների համաձայնությամբ։

Միջազգային իրավունքի հիմնական յուրահատկությունն այն է, որ որպես նրա սուբյեկտներ հիմնականում հանդես են գալիս ինքնիշխան պետությունները։ Այստեղից մասնավորապես հետևում է, որ միջազգային արենայում պետությունները հանդես են գալիս որպես միջազգային շփումների իրավահավասար մասնակիցներ, և նրանցից վեր չկա որևէ գերագույն իշխանություն։ **Այստեղից էլ տրամաբանորեն բխում է իրավական կոլիզիան և համակարգային հակամարտությունը, թե ով և ինչպես պետք է գործի դնի իրավունքի գերակայության մեխանիզմը։**

Ներպետական իրավունքի սուբյեկտներ են հանդիսանում ֆիզիկական և իրավաբանական անձինք, պետական մարմինները։

Միջազգային իրավունքի սահմանադրական լեգիտիմացման գործառույթը հենց պետք է սահմանի և իրացնի այդ «Գերագույն իշխանության» մեխանիզմը՝ իրավունքի գերակայության սահմանադրական բազայի սահմանման միջոցով, որը միջազգային իրավունքը միջպետական պայմանագրային իրավունքի հարթությունից կտեղափոխի վերազգային իրավունքի դաշտ։ Պե՞տք է և կարո՞ղ է արդյոք միջազգային իրավունքը հանդես գալ որպես «ամբողջությամբ վերցրած ողջ մարդկության համար ընդհանուր իրավակարգի» կարգավորման համակարգ։ Մեր ավանդական պատկերացումներին, որոնց համաձայն՝ միջազգային իրավունքն ու ներպետական իրավունքը, որպես կանոն, գործ ունեն տարբեր առարկաների հետ, փոխարինելու է գալիս այն տեսակետը, համաձայն որի՝ իրավունքի երկու համակարգերն էլ առնչվում են այն հիմնահարցերին, որոնք արմատներով նույնական են։ Այսպիսի մեկնաբանությունը խարսխվում է այն նախադրյալի վրա, որ միջազգային իրավունքն ի վիճակի է ուղղորդել և վերահսկել հասարակական իրողությունն ամբողջապես և քաղաքական իշխանությունը՝ մասնավորապես։

Այս իմաստով միջազգային իրավունքը նույնական է ներպետական (սահմանադրական և վարչական) իրավունքին։ Այս նույնականության նախահիմքը համարվում է սահմանադրականության ազգային իրավունքի մակարդակից վերազգային մակարդակ տեղափոխության գլխավոր օբյեկտը։ Սահմանադրական փաստարկման էությունն այն է, որ միջազգային իրավունքի հիմնական սկզբունքներն ուղղված են քաղաքական իշխանության բոլոր ձևերին և սահմանափակում են այն։ Նման մոտեցման պարագայում միջազգային և ներպետական իրավունքները դիտարկվում են ոչ թե առանձին ոլորտներ, այլ ավելի շուտ ամբողջական, բազմամակարդակ համակարգ։ Այս առումով հիմնախնդիր է համարվում այն, որ միջազգային իրավունքի նորմերը հաճախ ունենում են ոչ հստակ և վիճելի բնույթ։ Միաժամանակ պետական ինքնիշխանության և փոքրաքանակ ուժեղ գլոբալ ինստիտուտների աներերության ապահովումը ընդգծում են հիմնախնդրի ասպեկտները, որոնք ենթադրում են, որ միջազգային և ներպետական իրավունքները չեն կարող դիտարկվել որպես բացարձակ նույնական կատեգորիաներ։ Չնայած այս սահմանափակումներին՝ միջազգային իրավունքի վերաբերյալ տեղ է գտել մոտեցում՝ հիմնված «պոզիտիվիստական» իրավաբանական երկխոսության վրա, և թույլատրում է, որ այն գործառնավորվի պետության հանրային իրավունքի անալոգով։ Այս թույլատրության համար բացի նախորդից որպես հիմանավորում հանդես է գալիս հետևյալ բարոյական հրամայականը. «Միջազգային իրավունքի հիմնահարցերի վերաբերյալ երկխոսությունը պետք է տարվի այն լեզվով, որը թույլ կտա յուրաքանչյուրին, ում վերաբերում է դրա գործողությունը, լսելի լինել երկխոսության մեջ, ամբողջությամբ հասկանալ այլոց կողմից բերված փաստարկումների էությունը, և այդպիսով, մտնել իմաստավորված երկխոսության մեջ, որը թույլ կտա ընկալման ընդհանուր հիմքով հաշվետու կերպով նշմարել ցանկացած վիճելի հարց… Երկխոսություններն այն մասին, թե որն է ճիշտ և ոչ ճիշտը, ունենան բյուրեղյա մաքրություն, չի կարելի

թույլատրել, որ դրանք ուղուրպացվեն մի քանի ձեռնածուների կողմից, որոնք իհարկե երկու վայրկյանում կապացուցեն, որ իրավունքն ու արդարությունը իրենց կողմում են»[1]: Միջազգային իրավունքի սահմանադրական գործառույթը չի կարող մշակվել տնային տնտեսուհիների ակումբի պատահական երկխոսության կամ հեռուստատեսային թոք-շոուների ժամանակ՝ սահմանադրականության դասընթացի լեզվով: Այս առումով կենտրոնական հարցն այն է, թե «միջազգային իրավունքը ի վիճակի է, թե ոչ՝ կառավարելու քաղաքական վարքագիծը այն չափով, որ չափով, որ դա իրականացնում է ազգային իրավունքը»: Միջազգային իրավունքում ինչ չափով է պակասում որոշակիությունն և նորմատիվությունը (հակափաստարկումը), որոնք բնորոշ են ներպետական իրավունքին: Այս համատեքստում շեշտադրվում է այն թեզը, որ միջազգային իրավունքի զարգացման վրա էական ազդեցություն է թողնում առավել ազդեցիկ պետությունների պրակտիկան: Համապատասխանաբար, իրավական ամրագրման օբյեկտներ են դառնում այս կամ այն մակարդակի քաղաքացիական հասարակություն ունեցող ինտեգրացիոն կոնգլոմերացիաները՝ պետականագոյացման և քաղաքացիական հասարակության համապատասխան մեխանիզմով.

- Լոկալ հասարակություն (նկատի է առնվում ինքնիշխան պետության քաղաքացիությունը)
- միություն (ինքնիշխան պետությունների հասարակություններ՝ միութենական մակարդակի իրավական ընդլայնմամբ)-հանրություն
- Միջազգային հանրություն (մոլորակային մոդել և աշխարհի քաղաքացու ինստիտուտ): Այս պարագայում «համաշխարհային հանրային կարգի հայեցակարգային տեսլականը» և իրավունքի տեխնոլոգիան պետք է հիմնվեն առավելապես տեսության, քան դոկտրինայի վրա՝ ամբողջությամբ վերացնելով վերջինս:

[1] Տե՛ս Tomuschat, *supra* note 8, at 28.

ПРИНЦИПЫ КОНСТИТУЦИОНАЛИЗМА В СИСТЕМЕ МЕЖДУНАРОДНОГО ПРАВА

Вардан Айвазян
Доцент кафедры конституционного права ЕГУ,
кандидат юридических наук

В следствии недостаточного осознания и применения конституционализма в конструировании и становлении МП посредством системотехнической идентификации конституционных объектов (таких как Система управления миропорядок, глобальный правопорядок, система правоприменения глобального правопорядка, и т.д.) , СПР международных отношений остается на доктринальной основе, а механизм правогенеза глобального правопорядка узким образом замыкается на принципе генерации конвенционального права с механизмом нормообразования в рамках коалиционного права отдельной группой стран с автоматической индульгенцией общеобязательного применения уже всеми участниками МП. Таким образом, коалиционное право отменяет или преобразует весьма сомнительную ипостась самого принципа верховенства права, возвращая миропорядок в доООН-овское состояние в котором принцип «сила права» мог быть заменен принципом «права силы», что сейчас и происходит

THE PRINCIPLES OF CONSTITUTIONALISM IN THE SYSTEM OF INTERNATIONAL LAW

Vartan Ayvazyan
Docent of the YSU Chair of Constitutional Law,
Candidate of Legal Sciences,

Due the lack of full understanding and use of constitutionalism in constructing and development of International law through

identification of constitutional objects (such as World Order Management System, Global Law Order, Global Law Order Enforcement System etc.), the International Relations Regulation System remains on a doctrinal basis and Global Law Order Mechanism narrows down to the Conventional Law principles with a norm-formation mechanism within the Coalition Law provides a group of countries with automatic indulgence, which is compulsory for all the International Law participants.

Thus, the Coalition Law cancels or transforms a doubtful subsistence of the Supremacy of Law, returning the World Order to a pre-UN state, in which "the Power of Law" principle could be replaced with "the Power's Right". Which can now be seen happening.

Բանալի բառեր՝ *կոնստիտուցիոնալիզմ, համակարգային հակամարտություն, միջազգային իրավունք, իրավունքի գերակայություն, կոալիցիոն իրավունք, գլոբալ իրավական համակարգ:*
Ключевые слова: *конституционализм, системный конфликт, международное право, верховенство права, коалиционное право, глобальная правовая система.*
Key words: *Constitutionalism, systemic conflict, international law, rule of law, coalition law, global law order.*

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԱՐԴԻ ԻՐԱՎԱՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Անահիտ Մանասյան
ՀՀ սահմանադրական դատարանի նախագահի ավագ խորհրդական, ԵՊՀ սահմանադրական իրավունքի ամբիոնի ասիստենտ, իրավ. գիտ. թեկնածու

Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների կարևորագույն առանձնահատկություններից մեկը վերջիններիս պարտադիր բնույթն է: «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 61-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ Սահմանադրական դատարանի գործով, ընդունված որոշումները, ըստ էության, պարտադիր են բոլոր պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց համար՝ Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում:

Միևնույն ժամանակ, հիշյալ համատեքստում առաջացող կարևորագույն հիմնախնդիրներից է այն, թե արդյոք Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները պարտադիր են նաև հենց իր՝ Սահմանադրական դատարանի համար, ինչին հարկ ենք համարում անդրադառնալ սույն հոդվածի շրջանակներում: Անկասկած, մեր կողմից ներկայացված հիմնական եզրահանգումներից մեկն այն է, որ հիշյալ իրավական դիրքորոշումները պարտադիր են բոլոր պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց համար՝ Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում: Այդ հանգամանքը հեղինակների մեծ մասին հիմք է տվել եզրակացնելու, որ դրանց պարտադիրությունը վերաբերում է նաև հենց իրեն՝ Սահմանադրական դատարա-